

1. ՎՊՀ գրականության ամբիոնի գիտահետազոտական աշխատանքների ուղղություններն են.

Ա. Գրական կերպար, ձևավորման միջավայրը, սկզբունքները,

Բ. Լոռու գրականությունը. Լոռուց ծնված և Լոռում ծնված գրականությունը:

Սակայն սա չի նշանակում, որ գրականության ամբիոնի աշխատակիցները զբաղվում են միայն նշված հարցերի շրջանակով: Բ.գ.դ., պրոֆեսոր Վ. Եղիազարյանը միայնակ իրականացնում է մի ամբողջ խմբի աշխատանք՝ իր ուսումնասիրությունների առանցք պատկերացնելով հայոց հին և միջնադարյան գրականությունը: Նա հրատարակել է «Ակնարկներ հայոց նախամաշտոցյան գրականության», «Հայ հին գրականության պատմություն», «Գրիգոր Նարեկացին և 10-րդ դարի հա յգրականությունը» աշխատությունները, աշխարհաբար է՝ թարգմանել, կազմել, ծանոթագրել, առաջաբան-ուսումնասիրություններ է գրել և հրատարակել Ղեբուբնա Եղեսացու «Աբգար հայոց թագավորի թուղթը՝ ուղղված Քրիստոսին, և սուրբ Թադեոս առաքյալի քարոզները», Հովհաննես Սարկավազ Իմաստասերի «Տաղեր և հոգևոր երգեր», Նահապետ Քուչակի «Աշուղական երգեր» ստեղծագործությունները:

2. Ուշադրության կենտրոնում է եղել Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունը, որին նվիրված հոդվածներ են հեղինակել Բ.գ.դ., պրոֆեսոր Հ. Այվազյանը, Բ.գ.թ., դոցենտներ Գ. Մալումյան-Պապյանը, Վ. Փիլոյանը: Մասնավորապես Գ. Մալումյան-Պապյանը հեղինակել է «Հրանտ Մաթևոսյանի կերպարաշարի յուրահատկությունը», Հ. Այվազյանը՝ «Գրական կերպարի յուրահատկությունները Հր. Մաթևոսյանի «Տերը» վիպակում», Վ. Փիլոյանը՝ «Հայոց արքեպիսկոպոսի համակարգը Հր. Մաթևոսյանի ստեղծագործության մեջ», Հրանտ Մաթևոսյանի «Եզրով» անավարտ վիպակը» հոդվածները, Վ. Փիլոյանը Բ.գ.թ. Համո Մաթևոսյանի հետ կազմել է Հր. Մաթևոսյանի անտիպ երկերի երկհատորյակը (առաջաբանների հեղինակ՝ Վ. Փիլոյան, վերջաբանների հեղինակ՝ Հ. Մաթևոսյան): Երկհատորյակն արդեն տպագրվել է: Վ. Փիլոյանը հրատարակության է պատրաստել «Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունը» ուսումնասիրությունը, որը կհրատարակվի առաջիկայում: Հրատարակության է պատրաստ բանաստեղծ Հրաչյա Սարուխանի՝ ժողովածուներում չներառված բանաստեղծությունների հատորյակը՝ անհրաժեշտ առաջաբանով, ծանոթագրություններով:

Բանասիրության դոկտոր Հ. Այվազյանը հեղինակել է «Լուսավոր հանճարը» հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուն, որ նվիրված է Հովհ. Թումանյանի ստեղծագործությանը և գիտակցվում է որպես բանաստեղծի ծննդյան առաջիկա 150-ին նվիրվող իրողություն:

Անդրադարձ է կատարվել նաև այլ հեղինակների: Մասնավորապես Բ.գ.թ., դոցենտ Հ. Բաբուռյանը հեղինակել է «Հրաչյա Սարուխանի «Ի տրիտուր» ժողովածուն»,

«Միեր Բեժանյանի «Բոց և կավ» ժողովածուն» հողվածները: Վ. Փիլոյանն անդրադարձել է Վահագն Մուղնեցյանի արձակին և բանաստեղծությանը «Հոգով ուխտավորը» հողվածով: Ուշադրության են արժանացել նաև Ռ. Պողոսյանի, Արմեն Մարտիրոսյանի, Ն. Շահնագարյանի, Հր. Սարիբեկյանի, Մ. Միկոյանի, Ն. Կոռյանի, Ֆ. Շաքարյանի, Արա Նազարեթյանի, Ս. Խալաթյանի, Ռ. Հովասափյանի, այլոց գործերը:

3. Ամբիոնի նիստով հաստատված կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերով նախատեսված ուսումնասիրությունների մեծ մասն ավարտված է, սակայն կան նաև դեռևս ընթացքի մեջ գտնվող, ավարտվելիք ուսումնասիրություններ: Այս պահին գերխնդիրը գրական կերպարի վերաբերմամբ տեսական բնույթի ուսումնասիրության ստեղծումն է ամբիոնի աշխատակիցների համատեղ ջանքերով:

4. Աշխատանքը ենթադրում է շարունակականություն ոչ միայն կարճաժամկետ, այլև երկարաժամկետ ծրագրերի շրջանակներում, որովհետև հավելվում են նոր հեղինակներ ու ստեղծագործություններ, գրվում են նոր ուսումնասիրություններ:

Գրականության ամբիոնի վարիչ՝

Վ. Փիլոյան